08.10.25 - 10.10.25
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ

Ս.թ. հոկտեմբերի 8-10 ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում կանցկացվի «Փոխակերպվող տնտեսություն. մարդկային կապիտալի զարգացում, ստեղծարար նորարարական տնտեսություն, կայուն ներառական աճ» խորագրով միջազգային 2-րդ գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և Տարածաշրջանային գիտության ակադեմիայի համագործակցության շրջանակում:

Գիտաժողովի նպատակն է ապահովել հարթակ նորարարական հետազոտությունների արդյունքների տարածման համար՝ խթանելով համագործակցությունը ակադեմիական շրջանակների և աշխարհի գիտակրթական տարբեր հաստատությունների մասնագետների միջև, ինչպես նաև ուսումնասիրել, թե կրթության և տնտեսության մեջ նորարարական տեխնոլոգիաների փոխակերպող ուժը ինչպես կարող է նպաստել մարդկային կապիտալի զարգացմանը և կայուն ներառական աճին՝ տարածական-տնտեսական իմաստով:

Գիտաժողովին մասնակցելու են պետական պաշտոնյաներ, միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցիչներ, դեսպաններ, այլ համալսարանների ներկայացուցիչներ, հանրաճանաչ անձինք:

Գիտաժողովի աշխատանքային լեզուն անգլերենն է:

Մանրամասները՝ գիտաժողովի կայքէջում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am